

**ՁԵՌԱՄԲ ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ
Տ. ԱՌԱՔԵԼ ԵՊԻՄԿՈՂՈՍ ՔԱՐԱՄՅԱՆԻ
ՕԾՎԵՑ ՆՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԶՐԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ
ՆՈՐԱԿԱՌՈՒՅՅ Ս. ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ԵԿԵՂԵՑԻՆ**

Օգոստոսի 23-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Կոտայքի թեմի Հրազդան քաղաքի Զրառար թաղամասում ձեռամբ թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Առաքել եպս. Քարամյանի օծվեց Ս. Թուխ Մանուկ նորակառույց եկեղեցին:

Ս. Թուխ Մանուկ եկեղեցին կառուցվել է Ժորա և Մխիթար Գրիգորյանների անմիջական նախաձեռնությամբ և փեղի ժողովրդի ջանքերի շնորհիվ:

Առաքել Սրբազանն իր խոսքում խորին շնորհակալություն հայտնեց եկեղեցու բարերարներին հավաքքի այս նոր փան կառուցման համար՝ վստահ լինելով, որ այս եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը միշտ պիտի լինեն նրանց սրբերում և հոգիներում:

«Հավաքքի այս փները դարեր շարունակ եղել են մեր ինքնության խորհրդանիշն ու այն անխորպակելի վեմը, որի խնկաբույր կամարներից անդադար աղոթք ենք վերառաքել առ Աստված՝ մեր երկրի գորացման ու մեր Եկեղեցու շինության համար», - նշեց Սրբազան Հայրը:

Օծման արարողությանը մասնակցում էին Գեղարքունյաց թեմի առաջնորդական փեղապահ Նոգեշնորհ Տ. Դերենիկ վրդ. Դավթյանը, Կոտայքի թեմի հոգևորականներ, մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ:

Ս. Թուխ Մանուկ եկեղեցու օծման ավարտին նորակառույց եկեղեցու բակում փեղի ունեցավ մեծ փոնախմբություն:

*ՄԱՅՐ ԱԹՌՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ*



ՋՐԱՄԱՏԻ Ա. ԹՈՒՆ ՄԱՆՆՈՒՆԻ ՆՈՐԱԾՈՑ ԿԻՆՆԵՑԻՆ





«გოსტურიკო ქვეყნაყიჲ ქილიქი»